ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Դ-Քոմփանի» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 14.01.2022թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին 13.12.2021 թվականին կազմված թիվ 2 արձանագրությունը «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով անվավեր ճանաչել/վերացնել:

2. պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ին թույլատրել կատարել 13.12.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունների շտկում:

3. պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին անվավեր ճանաչել (վերացնել) 03.01.2022 թվականի բանակցությունների արդյունքում կազմված թիվ 3-րդ արձանագրությունը 91-րդ չափաբաժնի մասով, և այդ մասով անցկացնել գների իջեցման շուրջ համաժամանակյա նոր բանակցություններ:

Բողոքներ քննող անձին «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 14.01.2022թ.-ին:

17.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/04 համարի ծածկագիրը:

26.01.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

2. <u>ս«Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Դ-Քոմփանի» ՍՊԸ-ն 14.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «դեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Դ-Քոմփահաի» ՍՊԸ-ի կողմից 10.12.2021թ-ին ներկայացվել է հայտ, որը պատվիրատուի կողմից մերժվել է գնային առաջարկում էլեկտրոնային ստորագրության բացակայության պատճառով:

«Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ղեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարված ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 22/3 ծածկագրով մրցույթը գնահատող հանձնաժողովը մերժելի «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32 կետի 2-ին մասը, ըստ որի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով, և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված

գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Վերոնշյալ հոդվածը ներկայացնում է գնային արժեքի(թվերի), ավելացված արժեքի հարկի, չափաբաժնի, տառասխալների և սյունյակների անհամապատասխանությունների տեսակները և բացառությունները, իսկ էլեկտրոնային ստորագրության բացակայության մասին կարգավորումները սահմանված են նույն որոշման 40 և 41 կետերում:

Սույն դեպքում Պատվիրատուն մերժել է «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտ առանց շտկման հնարավորություն տալու այն հիմքով, որ գնային առաջարկը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

Հետևաբար, հաշվի առնելով, որ սույն դեպքում հայտը մերժվել է էլեկտրոնային ստորագրության բացակայության հիմքով թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ մասը չէր կարող դրվել հայտի մերժման հիմքում, քանի որ դրա կարգավորման առարկան այլ է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ եթթակետի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Նույն կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված Փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օյուով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված

տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ուղղակի հետևում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, ինչպես նաև հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):Այն դեպքում, երբ առկա են անհամապատասխանություններ հրավերի և ներկայացված հայտի միջև, ներառյալ երբ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ օրով կասեցնում է հայտերի գնահատման նիստը հնարավորություն տալով մասնակցին շտկելու հայտնաբերված թերությունները:

Սույն դեպքում ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 22/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովը 13.12.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ, թեև նշել է, որ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտում գնային առաջարկը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, այդուհանդերձ, վերջինս ընկերությանը չի վերապահել հնարավորություն մեկօրյա ժամկետում շտկել առկա թերությունները: Նման կերպ ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 22/3 ծածկագրով մրցույթը գնահատող հանձաժողովի կողմից թույլ է տրվել ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջների խախտում:

Վերոգրյալի հիման վրա եզրահանգում ենք, որ «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «դեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարված ԱԲԳ-ԳՀԱՊՁԲ 22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չի կատարվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին 13.12.2021 թվականին կազմված թիվ 2 արձանագրությունը «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով անվավեր ճանաչել/վերացնել:

2. պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ին թույլատրել կատարել 13.12.2021

թվականի թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունների շտկում:

3. պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին անվավեր ճանաչել (վերացնել) 03.01.2022 թվականի բանակցությունների արդյունքում կազմված թիվ 3-րդ արձանագրությունը 91-րդ չափաբաժնի մասով, և այդ մասով անցկացնել գների իջեցման շուրջ համաժամանակյա նոր բանակցություններ:

3. <u>«Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/737-2022 գրությամբ դիմել է «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 14.01.2022թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 24.01.2022թ.-ին secretariat@minfin.am էլեկտրոնային հասցեին ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-

ին հայտարարվել է «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 91-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը ստորագրված և կնքված չէ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժել:

iv. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Հրավերի 8.5-րդ կետի պահանջները, որոշել է ոչ գնային պայմանները բավարարող բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 28.12.2021թ.-ին ժամը 11:00-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 14.01.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու

միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը

կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխա-նությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած

փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարված «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով

արձանագրվել է, որ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 91-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը ստորագրված և կնքված չէ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժել, իսկ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Հրավերի 8.5-րդ կետի պահանջները, որոշել է ոչ գնային պայմանները բավարարող բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 28.12.2021թ.-ին ժամը 11:00-ին:

Սույն որոշման իրավական դրույթների համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացված թիվ 1 հավելվածը՝ դիմում-հայտարարությունը և թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու պարագայում Հանձնաժողովի կողմից, մասնակցի հայտը մերժելու մասին կայացված որոշման արդյունքում, թույլ է տրվել Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.9-րդ կետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Հանձնաժողովը, մասնակցի կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ նաև գնային առաջարկը, էլեկտրոնային թվային ստորագրված չլինելու պարագայում, պետք է ծանուցեր վերջինիս և առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ոստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված՝ բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 14.01.2022թ.-ին ներկայացված բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել թիվ «ԱԲԿ ԳՀ ԱՊՁԲ 22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին՝

- դադարեցնել 13.12.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

- ընդունել «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ից անհամապատասխանությունների շտկում պահանջելու մասին որոշում:

- դադարեցնել 03.01.2022թ.-ի թիվ 3-րդ արձանագրությունը՝ 91-րդ չափաբաժնի մասով և նույն չափաբաժնի մասով ընդունել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**